

Մտոյգ է որ ժԲ. դարուն սկիզբը Ս. Ծննդեան եկեղեցին իր նախնական գեղեցկութիւնը կորսնցուցած էր: Կոստանդիանոսէն ի վեր անցնող ութ դարերը Ս. Այրը բերած էին միլիոնաւոր ուխտաւորներ, և շատ անգամ ալ բարբարոս հրոսակներ: Ամենէն հաստատուն և լաւագոյն կերպով շինուած սալաշատակ մը կրնա՞ր այնքան երկար ժամանակամիջոցի մը մէջ անմնաս մնալ ուխտաւորներու խոշոր ու կոշտ կօշիկներուն անդադրում շփումներէն: Պէտք է նաեւ նկատի առնել հեռուէն եկող այնքան հաւատացեալներուն այն բարեպաշտիկ վանտալականութիւնը՝ որով կ'ուզէին իրենց մօտ ունենալ ո՛րեւէ Ս. Տեղի մը մասունքը, ժայռի մը կամ մոզայիքի մը բեկորը, մարմարի կամ ծեփի կտոր մը, այն ալ ընդհանրապէս շատ գէշ կերպով ձեռք բերուած: Մոմերու և խունկերու ծուխը, ինչպէս նաեւ դարաւոր փոշիներու համաբարդութիւնը աղօտացուցած էին մոզայիքներու պայծառութիւնը: Եթէ ժԲ. դարու մոզայիքները սեցած կ'երևնային 1461ին ուխտաւորի մը, ի՞նչ վիճակի մէջ կրնային գտնուիլ 1100ին, Դ. կամ Զ. դարու մոզայիքները: Այդ պատճառաւ է որ Պաշակիրները ջանացին հաստատել եկեղեցիին վաղեմի բարեգարգութիւնը: Իրենց աշխատանքները մէկ օրէն միւսը չաւարտեցան, ամենէն կարևորներէն սկսան, այսինքն՝ շէնքին, տանիքին կամ յատակին վերաբերեալ մասերէն սկսելով աւարտեցին պատերուն զարդարանքովը:

Պաշակրաց տիրապետութենէն յետոյ Ս. Ծննդեան եկեղեցիին այլ և այլ փոփոխութեանց ծանօթութեամբ կարող կ'ըլլանք ըմբռնել թէ Պաշակիրք ի՛նչպիսի բաղմաթիւ անհրաժեշտութիւններով յարգարեցին եկեղեցին, չորս դարու արաբական զրաւումէն յետոյ:

Ուղեգիր ուխտաւորներ այս շրջանին մէջ բաւական ծանօթութիւններ տուած են այս եկեղեցւոյ մասին. անոնց նկարագրութիւններէն կը քաղենք ինչ որ պիտի գրենք: Մասնագէտները իրաւամբ կը նմանեցնեն այս եկեղեցին հռովմէական պաղիլիքաներուն և կը սահմանեն գաւիթը իբր կամարակապ սրահ մը՝ որ իր առջևը ունի շէնքին դուռները: Այս դուռները, որ երեք են, կը բացուին ընդարձակ և երկար միջավայրի մը մէջ, ուր կան իւրաքանչիւր տասնըմէկ սիւններով չորս կարգեր, «սիւններ շատ գեղեցիկ, չորս ձողաչափ բարձր, միակտուր եւ